ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

Ք.Եղեգնաձոր

N 97 «07» հոկտեմբեր-ի 2007 թ.

«ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն որոշման («Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2007 թ. սեպտեմբերի 27-ի թիվ 1218-Ն որոշման խմբագրությամբ),

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ և 12-րդ հոդվածներով,

արձանագրելով, որ «ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված յուրաքանչյուրը 1,649,375 դրամ անվանական արժեքով 8 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված («ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռի համաձայն) և պատկանում են հիմնադրին՝ Հայաստանի Հանրապետությանը («ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի՝ «ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի փոխարկման կարգի համաձայն),

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի փոխարկման արդյունքները «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության և «ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի, այն է՝ «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված թվով 1 հատ 7,568,625 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսը փոխարկվում է «ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված թվով 1 հատ 1,649,375 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսով և

«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության 1 հատ 4,355,500 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսով (մնացած մասը փոխարկվում է գործընթացի մասնակից այլ ընկերությունների բաժնետոմսով):

2. Հաստատել «ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները համաձայն սույն որոշման 1-ին կետի և տեղաբաշխման արդյունքում ձևավորված կանոնադրական կապիտալի մեծությունը՝ 13,195,000 (տասներեք միլիոն հարյուր իննսունհինգ հազար) դրամ, որը կազմում է 8 (ութ) հատ 1,649,375 (մեկ միլիոն վեց հարյուր քառասունինները հազար երեք հարյուր յոթանասունհինգ) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունից առանձնացման ճանապարհով հիմնադրել «ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» անվանումով «փակ բաժնետիրական ընկերություն» կազմակերպական-իրավական ձևի առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն (այդ թվում՝ բնակչության առողջության առաջնային պահպանման գործունեություն) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

4. Հաստատել «ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը:

5. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանել 13,195,000 դրամ, որը բաժանվում է 8 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 1,649,375 դրամ անվանական արժեքով:

6. Սահմանել, որ

- «ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի իրավասություններն իրականացնում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, ընդ որում «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ընկերության տնօրենների խորհրդին վերապահված հարցերի լուծումը իրականացնում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, բացի ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովների գումարման հետ կապված հարցերից, որոնց լուծումը վերապահվում է ընկերության հիմնադրի կողմից լիազորված պետական կառավարման մարմնի ղեկավարին կամ նրա ներկայացուցչին
- Ընկերության տնօրենների խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները համատեղվում են,
- Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման համար վերստուգող հանձնաժողով չի կազմավորվում: Հանձնաժողովի իրավասությունները դրվում են վերստուգողի վրա, որը նշանակվում է Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի կողմից:

7. Ընկերության տնօրեն նշանակել Լարա Պյոտրի Հարությունյանին (անձնագիր AE 0234256 տրված 25.05.1999 թ. 004 կողմից, բնակության վայրը՝ ք. Երևան, Կիևյան փող., 12 շ., բն. 5):

8. Ընկերության վերստուգող նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետարանի ֆինանսական վերահսկողության պետ Վասակ Կարապետյանին:

9. «ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ՝ բաժնետիրական ընկերության հիմնադրի կողմից լիազորված պետական կառավարման մարմնի կողմից ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներին 100 տոկոս ձայնի

իրավունքով մասնակցելու համար լիազորել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Արտաշես Գալստյանին, որին վերապահվում են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված բոլոր հարցերի լուծումը, բացի ընկերության լուծարման, վերակազմակերպման, կանոնադրական կապիտալի փոփոխման, գործադիր մարմնի ձևավորման և խոշոր գործարքների կնքման հետ կապված հարցերի լուծումից:

ՀՀ Վայոց Ձորի մարզպետ՝ Վ. Մաթևոսյան